## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «կահույքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված N «ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԱՊՁԲ-19/18» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի ապրիլի 05-ին կնքված «ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԱՊՁԲ-19/18» պայմանագրում 2019 թվականի մայիսի 24-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ**

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ի հյուրերի տան լրացուցիչ կահավորման համար՝ թվով 2 փափուկ բազկաթոռների ձեռքբերման անհրաժեշտություն:

**Փոփոխության նկարագրություն՝**

Պայմանագրի 8.5 կետին համապատասխան հաստատել №5 չափաբաժինը «հյուրասենյակի կահույք» ավելացնել պայմանագրի գնի 10(տաս) տոկոսի չափով:

Պայմանագրի 5.1 կետում նշված 1316454 (մեկ միլիոն երեք հարյուր տասնվեց հազար չորս հարյուր հիսունչորս) ՀՀ դրամ» բառերը փոխարինել «1448000»(մեկ միլիոն չորս հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամով» բառերով:

**Փոփոխության հիմնավորում՝**

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ի կողմից ձեռքբերված հյուրասենակային կահույքի հետ համադրելիությունը ապահովելու անհրաժեշտություն: Գնումների մասին օրենքի 23-րդ հոդվածի 3 կետ:

Պատվիրատու՝ **ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլգիա» ԳԱԿ ՊՈԱԿ**

**Համաձայնագիր-2**
**05.04.2019թ. կնքված N «ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԱՊՁԲ-19/18»**
**ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

ք. Երևան «24» մայիսի 2019թ.

ՀՀ ԳԱԱ <Հայկենսատեխնոլոգիա> ԳԱԿ ՊՈԱԿ-ը այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս տնօրեն Ա. Սաղյանի մի կողմից, և <Ֆոտոն> ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս Ընկերության տնօրեն՝ Ն. Պետրոսյանը, մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 05.04.2019թ. կնքված N «ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԱՊՁԲ-19/18» ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.5-րդ կետը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների կազմակերպման կարգի 23-րդ հոդվածի 3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը որոշեցին՝**

Հիմք ընդունելով 05.04.2019թ. կնքված N«ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԱՊՁԲ-19/18» ծածկագրով գնման պայմանագրի 8.5 կետը՝

1. Պայմանագրի 8.5 կետին համապատասխան հաստատել №5 չափաբաժինը (հյուրասենյակային կահույքը) ավելացնել սույն պայմանագրի գնի 10(տաս) տոկոսի չափով:

2, Պայմանագրի 5.1 կետում նշված «1316454» (մեկ միլիոն երեք հարյուր տասնվեց հազար չորս հարյուր հիսունչորս) ՀՀ դրամ» բառերը փոխարինել «1448000»(մեկ միլիոն չորս հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամով» բառերով:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:
4. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| <<Հայկենսատեխնոլոգիա>> ԳԱԿ ՊՈԱԿ | «Ֆոտոն» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան Գյուրջյան 14 | ք. Երևան, Ռոստոմի 58 |
| Երևանի թիվ 1 ՏԳԲ | «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900018005729 | 16044050085000 |
| ՀՎՀՀ 00871944 | 90036001 |
| Տնօրեն՝ Ա. Սաղյան | Նելլի Պետրոսյան |
| ------------------------------- (ստորագրություն) | ------------------------------- (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |